159

# ՔԱՂՎԱԾՔ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԻՑ

## ՀՐԱՀԱՆԳ

Ի ԼՐՈՒՄՆ ԿԱՅԱՑԱԾ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱ-
ՏԱՆՔԻ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅՅՈՒՂԱՐԴԻ ՑԱՆՑՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՅՈՒՂԱՐԴԻ

ԵՐԵՎԱՆ 1936 Թ.

# ՔԱՂՎԱԾՔ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԻՑ

---

# ՀՐԱՀԱՆԳ

## Ի ԼՐՈՒՄՆ ԿԱՅԱՑԱԾ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱ-ՏԱՆՔԻ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՅՈՒՂԱՐԴԻ ՑԱՆՑՈՒՄ

---

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Սոյուզորգուչոտ 89, Տպարան Քանաքեռգեսի

ՅԵՐԵՎԱՆ 1936 Թ.

Թարգմանություն ռուսերենից Ա. ՂԱԶԱՐՅԱՆԻ
Պատ. խմբագիր Լ. ՈԹՅԱՆ
Տեխ. խմբագիր ՄԱՍԻՍ ՓԱՆՈՍՅԱՆ
Սրբագրություն Զ. ԲԱԲԱԽԱՆՅԱՆԻ

# ВЫПИСКА ИЗ ТАРИФНОГО СОГЛАШЕНИЯ

# ИНСТРУКЦИЯ

К тарифному соглашению о сдельно-примиальной оплате труда по системе Армянского треста Главмаслопрома.

ՔԱՆԱՔԵՌՇԻՆԻ ՏՊԱՐԱՆ

Հանձնված է տպագր. 20/III 36 թ. Ստորագր. տպագր. 31/IV

Գլավլիտ № 2062. պատվեր № 9. տիրաժ 500.

ք. ՄՈՍԿՎԱ

1936 թ. փետրվարի 3-ին

# ՔԱՂՎԱԾՔ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԻՑ

*Աշխատանքի արտադրողականության հետագա աճն ապահովելու, գործարաններն ու սարքավորումն ավելի լավ օգտագործելու, մթերումների և արտադրության պլանը կատարելու և գերակատարելու, կաթնամթերքների որակը լավացնելու,—կորուստները և ինքնարժեքը պակասեցնելու նպատակով—Կաթնարդյունաբերության Միության Կենտկոմը և Գլավմասլոպրոմը կնքեցին սույն տարիֆային համաձայնությունը յուղա-պանրագործական արդյունաբերության աշխատողների աշխատանքի վարձատրման պայմանների մասին 1936 թ. ընթացքում։*

## I. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

*1935 թ. գոյություն ունեցող ամսական գործավարձային գնահատումների փոխարեն ամբողջ 1936 թ. համար սահմանել միասնական տարեկան գործավարձային գնահատումներ, վորոնք հաշվում են տարեկան տարիֆային դրույքի 60 տոկոսի բաժանումով արտադրության պլանի վրա։*

*Մնացած 40 տոկոսը վճարվում է վորպես կայուն ամսական դրույք։*

## Ա. ԿԱԹ ԸՆԴՈՒՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

*1. Կաթ ընդունողների միասնական տարեկան գործավարձային գնահատումներն հաշվում են կաթ ընդունողի տարեկան*

տարիֆային դրույքի 60 տոկոսի բաժանումով պարտավորագրերով հանձման յենթակա կաթի մթերման պլանի վրա (դուրս յեկած տարվան համար սահմանված զեղչը և խորհտնտեսությունների հետ կնքած պայմանագրերը, չհաշված կաթի գնումները կոնվենցիոն գներով)։

Նրանց տարիֆային դրույքի մնացած 40 տոկոսը վճարվում ե վորպես կայուն ամսական աշխատավարձ։

Հաշված գործավարձային տարեկան գնահատումները պետք ե 1936 թ. մարտի մեկից վոչ ուշ իջեցվի կաթի ընդունման ամեն մեկ կետին։

2. Կաթ ընդունողների տարեկան գործավարձային գնահատումները հաշվելիս, տարվա պլանի մեջ չպետք ե մտցնել կաթի կոնվենցիոն գնումների համար նրանց տրված առաջադրանքը։

Կոնվենցիոն գներով կաթի գնումների համար, կաթ ընդունողները վարձատրվում են առանձին նույն գնահատումներով, վորոնք հաշվել են պարտավորագրերով կաթի մթերման պլանի համար։

Այդ գնահատումներով գործավարձային վարձատրությունից բացի, կաթ ընդունողների համար սահմանվում ե լրացուցիչ պրոգրեսիվ վարձատրություն կոլտնտեսություններից, կոլտնտեսականներից և մենատնտեսներից կոնվենցիոն գներով կաթ գնելու համար։

| | Կոլտնտեսականներից և մենատնտեսներից | Կաթնապրանքային ֆերմ. և կոլտնտեսություն. |
|---|---|---|
| Պարտավորագրերով կաթի մթերման յեռամսյակային պլանի 15 տոկոսի քանակությամբ գնած ամեն մեկ ցենտներ կաթի համար . . . . . . . | 1 ռ. 25 կ. | 75 կ. |
| Պարտավորագրերով կաթի մթերման յեռամսյակային պլանի 15 տոկոսից ավել քանակությամբ գնած ամեն մեկ ցենտներ կաթի համար . . . . . | 2 ռ. 50 կ. | 1 ռ. 30 կ. |
| Պարտավորագրերով կաթի մթերման յեռամսյակային պլանի 25 տոկոսից | | |

| | | |
|---|---|---|
| ավել քանակությամբ գնած ամեն մեկ ցենտներ կաշի համար . . . . . | 3 ռ. 75 կ. | 2 ռ. 50 կ. |
| Պարտավորագրերով կաշի մթերման յեռամսյակային պլանի 35 տոկ. ավել քանակությամբ գնած ամեն մեկ ցենտներ կաշի համար . . . . . . . . | 5 ռ. | 3 ռ. 50 կ. |
| Պարտավորագրերով կաշի մթերման յեռամսյակային պլանի 45 տոկոսից ավել քանակությամբ գնած ամեն մեկ ցենտներ կաշի համար . . . . . | 7 ռ. | 5 ռ. |

Խորհտնտեսություններից կոնվենցիոն գներով գնած կաշի համար և Դավալչեսկի կաշի համար կաշ ընդունողները վարձատրվում են գործադրվող գնահատումներով, առանց սույն կետով սահմանված լրացուցիչ վարձատրության։

3. Կոնվենցիոն գներով կաշը յեթե գնում ե անմիջապես գործարանը առանց կաշի ընդունման կետերի մասնակցության, ապա Ա. բաժնի 2-րդ կետով սահմանված ամեն մեկ ցենտներ կաշի վարձատրությունը վճարվում ե՝ 50 տոկոսը գործարանի դիրեկտորին և 50 տոկ. գործարանի աշխատակցին, վորը մասնակցում ե կաշ գնելուն և ընդունելուն։

## Բ. ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Յուղա-պանրագործարանների արտադրական բանվորների համար, վորոնք անմիջապես մասնակցում են արտադրության գործողությունում, այն դեպքում յերբ հնարավոր չե անցկացնելու անհատական գործավարձ, պահպանվում ե խմբակային գործավարձային աշխատանքի վարձատրությունը։

Խմբակային գործավարձային գնահատումները հաշվում են ամեն մեկ բրիգադայի համար առանձին՝ յուղագործ, պանրագործ և այլ ցեխերի։

Գործարանների բանվորների խմբակային, գործավարձային տարեկան գնահատումները հաշվում են արտադրական բանվորների աշխատավարձի տարվա ֆոնդի 60 տոկ. բաժանումով, տարեկան արտադրության պլանի վրա։

Տարիֆային դրույքի 40 տոկոսը վճարվում ե ամեն ամիս, վորպես կայուն դրույք։

Պլանային առաջադրանքի գերակատարման և աշխատանքի արտադրողականության հաշվին արտադրական բրիգադայի բանվորների թվի կրճատման դեպքում, բրիգադայի աշխատավարձի ֆոնդը և խմբակային գործավարձային գնահատումը չպետք ե պակասեցվի։

2. Գործավարձային գնահատումները հաշվելու համար պլանավորվող և արտադրվող բոլոր կաթնամթերքները վեր են ածվում պայմանական միավորների. հետեվյալ հաշվով՝

| Կաթնամթերքների անվանումը | Միավոր | Կաթնամթերքների անվանումը | Միավոր |
|---|---|---|---|
| 1. Յուղ . . . . . . . | 1,0 | 9. Սմետան, թանից . . | 0,2 |
| 2. Պանիր Շվեցարական | 1,5 | 10. Ալբումին . . . . | 0,4 |
| 3. « Չանախ . . | 1,0 | 11. Կաթի կվաս . . . | 0,1 |
| 4. « Չեչիլ . . . | 1,2 | 12. Պաղպաղակ . . . . | 1,0 |
| 5. « Հոլլանդական, բակշտեյն . | 1,15 | 13. Պրոստոկվաշա . . | 0,2 |
| | | 14. Մածուն . . . . . | 0,2 |
| 6. Կազեյին . . . . . | 1,1 | 15. Բրինզա . . . . . | 0,5 |
| 7. Տվարոգ (լոռ) . . . | 0,3 | 16. Անյուղ պանիր . . | 0,6 |
| 8. Պանրային մասսա . . | 0,4 | 17. Կեֆիր . . . . . . | 0,2 |

Օգտվելով այդ աղյուսակից, պլանավորվող բոլոր կաթնամթերքները վեր են ածվում պայմանական միավորների։ Բրիգադայի աշխատավարձի տարվա ֆոնդի 60 տոկոսի բաժանումով պայմանական միավորների քանակի վրա, վորոշվում ե տարեկան գործավարձային գնահատումը յուղի համար, և ապա այդ գնահատումը բազմապատկելով աշխատողունակության (трудоемкость) կոեֆֆիցիենտով վորոշվում ե տարեկան գործավարձային գնահատումը կաթնամթերքի ամեն մի տեսակի վերաբերյալ։

3. Արտադրական բանվորների աշխատավարձի գործավարձային մասը վորոշվում ե մեկ ամսում արտադրած կաթնամթերքների բազմապատկումով սահմանված գնահատմանը։

4. Աշխատավարձի գործավարձային մասի բաշխումը, արտադրությունում մասնակցող բանվորների միջև, կատարվում ե ամեն մեկ բանվորի տարիֆային դրույքի փաստորեն աշխատած մարդորերի թվի հարաբերականով։

## 2. ՇՐՋԳՈՐԾՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ՅԵՎ ԿԱԹԻ ՄԹԵՐՄԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐՈԳՐԵՍԻՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Շրջգործվարչությունների կառավարիչների, գործարանների դիրեկտորների-աշխղեկի, արտադրական հրահանգիչների և կաթ մթերող տեսուչների համար 1936 թ. հունվարի 1-ից սահմանել աշխատանքի վարձատրման հետևյալ կարգը՝

Շրջգործվարչությունների կառավարիչների, գործարանների դիրեկտորների և աշխղեկի, արտադրական հրահանգիչների դրույքները (աշխատավարձը) բաժանվում է յերկու մասի՝—կայուն ամսական աշխատավարձ ամսական դրույքի 70 տոկոսի չափով և գործավարձային վարձատրություն, վորը հաշվում է մեկ հազար ռուբլուն անփոփոխ գներով, յեռամսյակային աշխատավարձի 30 տոկոսի բաժանումով յեռամսյակային արտադրության պլանի վրա, հաշված 1926/27 թ. անփոփոխ գների արժեքով:

2. Մթերման տեսուչների դրույքները բաժանվում է յերկու մասի՝—կայուն ամսական աշխատավարձ ամսական դրույքի 70 տոկոսի չափով և գործավարձային վարձատրություն, վորը հաշվում է մթերած կաթի ամեն մեկ ցենտներին, յեռամսյակային աշխատավարձի 30 տոկոսի բաժանումով յեռամսյակային կաթի մթերման պլանի վրա (պայմանավորագրերով մթերվող, խորհտնտեսությունների կողմից հանձնվող, կոնվենցիոն գներով, Դավալչեսկի կաթի և հալած յուղի):

3. Պլանի գերակատարման դեպքում 1-ին և 2-րդ կետերում նշված աշխատողների համար, նրանց համար սահմանված գործավարձային գնահատումները ավելացվում է հետևյալ պրոգրեսիվ շկալայով՝

Պլանի գերակատարման առաջին 10 տոկոսի համար՝ սահմանված գնահատումներից 30 տոկ. ավել

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| « | « | 11-ից | մինչև | 20% | համար | սահմ. | գնահատ. | 60% | « |
| « | « | 21-ից | « | 30% | « | « | « | 90% | « |
| « | « | 31-ից | « | 40% | « | « | « | 120% | « |
| « | « | 40-տոկոսից ավելի | | | « | « | « | 150% | « |

4. Կոնվենցիոն գներով կաթի գնումը կազմակերպող գործարանի և Շրջգործվարչության աշխատողների համար սահմանել

լրացուցիչ վարձատրություն ամեն մեկ ցենտներին 50 կոպ. չափով.

ա) Գործարանին 40 կոպ., վորը բաշխվում է միավորներով՝ գործարանների դիրեկտորին 3 միավոր և վարպետին 1 միավոր։

բ) Շրջգործվարչությանը 10 կոպ., վորը բաշխվում է միավորներով՝ կառավարիչին 2 միավոր, արտադրական հրահանգիչին (յեթե նա փաստորեն մասնակցում է կաթի գնմանը)—1 միավոր և կաթի մթերման տեսչին 1 միավոր։

5. Խորհտնտեսություններից կոնվենցիոն գներով գնվող կաթի նաև Դավալչեսկի կաթի համար 4-րդ կետի համաձայն լրացուցիչ վարձատրություն չի տրվում։

6. Շրջգործվարչությունների կառավարիչների դրույքները ստորաբաժանման յենթարկել ըստ տնտեսական աշխատանքի մեծության, գործարանների թվի և արտադրության պլանի։

Սահմանել, վոր Շրջգործվարչությունների կառավարիչների դրույքները 250-ից մինչև 500 ռ. չափով պետք է հաստատվեն Գլավմասլոպրոմի պետի կողմից, տրեստների դիրեկտորների միջնորդությամբ, հաստատված աշխատավարձի ֆոնդի սահմաններում։

## 3. ՅՈՒՂԱՐԴԻ ՑԱՆՑԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՅՈՒՂԻ ՎՈՐԱԿԸ ԼԱՎԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

Գործարանների, կաթկայանների և շրջգործվարչությունների անձնակազմին, բարձր վորակի յուղ արտադրելու համար սահմանել պարգևատրման հետևյալ կարգը՝

1. Գլավմասլոպրոմի կողմից տրեստների համար սահմանված յուղի տարեկան պլանային բալլը, տրեստները ստորաբաժանում են ըստ շրջգործվարչությունների և վերջիններն ըստ գործարանների այն հաշվով, վորպեսզի ըստ գործարանների միջին բալլը հավասար լինի տրեստի կողմից տվյալ շրջգործվարչության համար սահմանված պլանային բալլին, իսկ ըստ շրջգործվարչությունների տարվա միջին բալլը հավասար լինի Գլավմասլոպրոմի կողմից տրեստի համար սահմանված տարվա պլանային բալլին։

Շրջգործվարչությունների կողմից ըստ գործարանների սահմանված պլանային բալլերը յենթակա յեն հաստատման տրես-

տի կողմից առանձին ըստ ամեն մեկ գործարանի։

2. Ըստ մեքենայացված և կիսամեքենայացված գործարաններին, որոնք ունեն պլան 88-ից մինչև 89 բալլ և ըստ պրիմիտիվ գործարաններին, որոնք ունեն պլանային բալլ 86-ից մինչև 89-ը, սահմանել յուղի որակի համար հետևյալ պարգևատրումները՝

**ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ 1 ՑԵՆՏՆԵՐ ՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ ՌՈՒԲԼԻՆԵՐՈՎ.**

| | Մեքենայացված և կիսամեքենայացված | Պրիմիտիվ գործարան. |
|---|---|---|
| Բալլի պլանները կատարելու համար | 5 | 10 |
| « « 1 բալլով գերակատարելու համար | 10 | 15 |
| « « 2 « « « | 15 | 20 |
| « « 3 « « « | 20 | 30 |
| « « 4 « « « | 25 | 40 |
| « « 5 « « « | 30 | 45 |
| « « 6 « « « | 35 | 55 |
| « « 7 « « « | 40 | 50 |
| « « 8 « « « | 45 | 55 |
| « « 9 « « « | 50 | 60 |
| « « 10 « « « | 55 | 65 |
| « « 11 « « « | 60 | 70 |
| « « 12 « « « | 65 | 75 |
| « « 13 « « « | — | 80 |
| « « 14 « « « | — | 85. |

86 բալլից ցածր յուղ արտադրող պրիմիտիվ գործարանները և 88 բալլից ցածր յուղ արտադրող կիսամեքենայացված գործարանները պարգևատրման ենթակա չեն, անկախ նրանից թե տվյալ գործարանի համար ինչ պլանային բալլ է սահմանվել։

5. Ցեխի արտադրած յուղը (էքստրա տեսակի) ըստ համի և հոտի ունի գնահատում 43 բալլից ցածր, յուղը (բարձր տեսակի) ըստ համի և հոտի ունի գնահատում 41 բալլից ցածր, յուղը (առաջին տեսակի) ըստ համի և հոտի ունի գնահատում 37 բալլից ցածր, յուղի վորակի համար գործարանի անձնակազմին հասանելիք պարգևատրումը պակասեցվում է 60 տոկոսով։

6. Աշխատակիցների մեղավորությամբ (անփութություն աշխատանքի մեջ, տեխնիկական և ներքին կարգապահության կանոնների խախտում և այլն) առաջացած խոտանը վճարման յենթակա չի և բացի դրանից, յերկրորդ տեսակի և խոտան պրոդուկցիա արտադրելու համար աշխատակիցների համապատասխան կատեգորիաներից նրանց հասնելիք պարգևատրման և աշխավարձի գումարից կատարվում են պահումներ հետևյալ չափով՝

| | Կիսամեքենացվ. գործարաններ | Պրիմիտիվ գործարաններում |
|---|---|---|
| 2-րդ տեսակի յուղի մեկ ցենտներին . . | 100 ռ. | 50 ռ. |
| խոտան յուղի « « . . | 200 ռ. | 100 ռ. |

7. Սահմանել, վոր պարգևատրումները հաշվում են ամսական միջին բալլով, ըստ վորի ամսվա ընթացքում արտադրած յուղի ընդհանուր քանակից հանվում է յերկրորդ տեսակը և խոտանը, վորի դիմաց հաշվում է պահումներ։

8. Պարգևատրման հաշվարկը կատարվում է ճշտիվ մինչև 0,1 բալլի, ամեն 0,1 բալլի համար ավելացվում է 0,1 մաս-պարգևատրման համապատասխան քանակների տարբերություն։

9. Պարգևատրման ընդհանուր գումարը գործարանի անձնակազմի միջև բաշխելու համար սահմանել հետևյալ կարգը։

ա) Յուղի վորակի համար հասանելիք պարգևատրման գումարը բաշխվում է տվյալ ամսում գործարանում փաստորեն աշխատող աշխատակիցների միջև ամեն մի առանձին աշխատակցին վերապահված միավորների քանակով։ Պարգևատրումը բաշխելու համար ըստ առանձին տիպի գործարանների առանձին աշխատակիցներին վերապահվում են հետևյալ միավորները՝

| | Մեքենայացված գործարաններ. | Պրիմիտիվ գործարաններում |
|---|---|---|
| 1. Գործարանի դիրեկտոր . . . . . . | 3,0 | 1,0 |
| 2. Ինժեներ-տեխնոլոգ կամ աշխղեկ կամ գործարանի վարպետ, վորը պատասխանատու յե տեխնոլոգիական պրոցեսի համար . . . , . . . . . . | 7,0 | 5,0 |
| 3. Յուղագործ վարպետ (այն դեպքում յեթե գործարանում արտադրության պատասխանատուն հանդիսանում է ինժեները տեխնոլոգը կամ աշխղեկը) . . . . , | 5,0 | — |
| 4. Վարպետի ոգնական . . . . . . . . | 3,0 | — |
| 5. Ավագ բանվոր . . . . . . . . . | 1,4 | 1,2 |
| 6. Արտադրական բանվորներ . . . . . | 1,0 | 1,0 |
| 7. Առաջին լաբորանտ . . . . . . . | 2,4 | 1,3 |
| 8. Յերկրորդ « . . . . . . . . | 1.6 | — |
| 9. Մեքենավար. . . . . . . . . . | 1,6 | — |
| 10. Հնոցավար . . . . . . . . . . | 0,8 | — |
| 11. Արտադրական հրահանգիչ կամ ավյալ գործարանը սպասարկող շրջյուղարդի տեխնիկ . . . . . . . . . . . | 1,2 | 0,7 |
| 12. Շրջյուղարդի կառավարիչ . . . . . | 0,4 | 0:2 |

10. Բարձր վորակի յուղի համար կաթ ընդունողներին, կաթը փոխադրողներին և կաթի փոխադրությամբ զբաղվող շոֆերներին պարգևատրման վարձատրություն սահմանում է գործարանի դիրեկտորը, պարգևատրման գումարի 10 տոկոսից մինչև 25 տոկոսի սահմաններում։

Գործարանի դիրեկտորը տարվա սկզբին սահմանում է այն միավորները, վորոնցով ամբողջ տարվա ընթացքում պարգևատրվում է վերև հիշված անձնակազմը, յելնելով նրանից, վոր վերև հիշված բանվորների պարգևատրման միավորների ընդհանուր գումարը չ՚պետք է գերազանցի միավորների բոլոր գումարի 25 տոկոսից։

11. Յերկրորդ տեսակի և խոտանի համար աշխատակիցներից պահումները կատարվում է նույն կարգով, ինչ կարգով կա-

տարվում է պարգևատրման բաշխումը։ Խոտանի համար պահում կատարվում է միայն այն կաթ ընդունողներից, վորոնք հանձնում են ցածր վորակի կաթ։

12. Առանձին աշխատակիցների միջև պարգևվատրումների բաշխումը փոփոխելը թույլատրվում է յուղարդի տրեստների առաջադրությամբ և միայն Գլավմասլոպրոմի պետի հաստատությամբ։

13. Յուղի վորակի համար պարգևատրումների և պահումների սահմանված կարգը վերաբերվում է միայն գործարանային յուղին։

14. Բանվորների հետ պարգևատրման հաշվարկը պետք է կատարվի ամսվա յերկրորդ կեսի համար տրվող աշխատավարձի հետ միասին, վոչ ուշ քան հաշվետու ամսին հաջորդող ամսի 10-ից։

15. Յուղի վորակի համար մտցնել պարգևատրում տալը, յելնելով յուղի մեջ պարունակվող ջրի չափից։

16. Յուղի վորակի համար, յելնելով յուղի մեջ պարունակվող ջրի չափից, պարգևատրում տալը տարածել հետևյալ աշխատակիցների վրա՝

## ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Աշխդեկ
Յուղագործ վարպետ
Արտադրական հրահանգիչ
Լաբորանտ

## ՄՆԱՑԱԾ ԱՅԼ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Վարպետ
Վարպետի օգնական կամ ավագ բանվոր
Լաբորանտ
Արտադրական հրահանգիչ

17. Մեքենայացված, ինչպես նաև պրիմիտիվ գործարաններում, վորոնք ունեն թրմիչ մեքենա 14,6 մինչև 16 տոկ. ջուր պարունակող յուղ արտադրելիս, 16-րդ կետում նշած աշխատակիցներին բալլի համար նրանց հասնելիք պարգևվատրումը տըրվում է լրիվ չափով.

ա) 14—14,5 տոկ ջուր. պարունակող յուղ արտադրելիս, նրանց պարգևվատրումը պակասեցվում է 25 տոկոսով։

բ) 14 տոկոսից պակաս ջուր պարունակող յուղ ար-

տադրելիս, բալլի համար նրանց հասանելիք պարգևվատրումը չի տրվում։

գ) 16 տոկոսից ավել ջուր պարունակող յուղ արտադրելիս, բալլի համար նրանց հասանելիք պարգևվատրումը չի տրվում։

Մյուս այլ տիպի բոլոր գործարաններում 13,5 մինչ 13,9 տոկոս ջուր պարունակող յուղ արտադրելիս, հիշած աշխատակիցներին բալլի համար հասանելիք պարգևվատրումը տրվում է լրիվ չափով։

ա) 14—15 տոկոս ջուր պարունակող յուղ արտադրելիս, բալլի համար պարգևվատրում ավելացվում է 20 տոկոսով։

բ) 12,5—13,4 տոկ. ջուր պարունակող յուղ արտադրելիս, պարգևվատրումը պակասեցվում է 50 տոկոսով։

գ) 12,5 տոկոսից պակաս ջուր պարունակող յուղ արտադրելիս, բալլի համար հասանելիք պարգևվատրումը չի տրվում։

դ) 16 տոկոսից ավելի ջուր պարունակող յուղ արտադրելիս, բալլի համար հասանելիք պարգևվատրումը չի տրվում։

## 4. ԳԼԱՎՄԱՍԼՈՊՐՈՄԻ ՊԱՆՐԱԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՅԵՎ ԱՅԴ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԲԱԶԱՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՊԱՆՐԻ ԲԱՐՁՐ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

1936 թ. համար սահմանել աշխատավարձի և պարգևատրումների չափը վորոշելու հետևյալ կարգը՝

### ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Գլավմասլոպրոմի գործարանների պանրագործ վարպետների համար 1936 թ. հունվարի 1-ից սահմանել աշխատավարձ (դրույք).

ա) ԸՍՏ ՄԱՆՐ ՊԱՆԻՐՆԵՐԻ

| | | |
|---|---|---|
| 2-րդ կատեգորիայի պանրագործ վարպետներին | 120 մինչ 175 ռ. |
| 1-ի ,, ,, ,, | 175 մինչ 225 ռ. |

բ) ԸՍՏ ԽՈՇՈՐ ՊԱՆԻՐՆԵՐԻ

| | |
|---|---|
| 2-րդ կատեգորիայի պանրագործ վարպետներին | 150 մինչ 200 ռ. |
| 1-ի ,, ,, ,, | 300 ,, 350 ռ. |

2. Նշված դրույքները առանձին վարպետների համար սահմանվում են շրջգործվարչությունների կառավարիչների ներկայացմամբ—տրեստների դիրեկտորների կողմից, յելնելով նրանց կվալիֆիկացիայից, գործարանի տիպից և վերջին տարում արտադրած կաթնամթերքների վորակից։

## ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԸՍՏ ԽՈՇՈՐ ՊԱՆԻՐՆԵՐԻ.

1. Խոշոր պանիր արտադրող ձեռնարկությունների թվին են դասվում

ա) Շվեյցարական, սովետական, չեդդեր. Գրյուեր յեվ Ալտայի Գաուդի պանիրներ արտադրող գործարանները,

բ) Վերեվ հիշված տեսակների խոշոր պանիրները ընդունող և բեռնող բազաները։

2. Պանրագործարանների անձնակազմին պանրի բարձր վորակի համար և այդ գործարանները սպասարկող բազաների անձնակազմին սահմանել պարգևատրման հետևյալ կարգը՝

Գործարանի արտադրած և բազային հանձնած եկստրա և բարձր տեսակի խոշոր պանրի ամեն մեկ ցենտների համար գործարանի անձնակազմին պարգևատրել հետևյալ չափով՝

| | | |
|---|---|---|
| ամեն մեկ ցենտներ եկստրա | տեսակին | 100 ռ. |
| ,, ,, բարձր | ,, | 30 ռ, |

3. Պարգևատրման ընդհանուր գումարը առանձին աշխատակիցների միջև բաշխվում է հետևյալ միավորներով—

| | |
|---|---|
| Դիրեկտոր | — 2 |
| Աշխողեկ | 4 |
| Վարպետ | 10 |
| Վարպետի օգնական | 4 |
| Բանվոր | 2 |
| Լաբորանտ | 3 |
| Գործարանն սպասարկող արտադրական շրջհրահանգիչ | 1 |
| Ավագ պանիր աղող | 4 |
| Պանիր աղող | 2,5 |
| Շրջ. գործ. կառավարիչ | 0,5 |
| Մեքենավար | 3 |

Հնոցավար 1

Կաթ ընդունող 1

4. Պարգևավարում ստանում են միայն մշտական և սեզոնային բանվորները, վորոնք մասնակցում են պանիր արտադրելու աշխատանքին։ Որավարձով աշխատող բանվորները պարգևավարում չեն ստանում։

5. Աշխատակիցների մեղավորությամբ առաջացած խոտանի համար վարձատրություն չի տրվում, բացի դրանից սահմանել պահումներ՝ արտադրած յերկրորդ տեսակի և խոտան պանիրի ամեն մեկ ցենտների համար հետևյալ չափով՝ —

2-րդ տեսակի ամեն մի ցենտներին 25 ռ.

խոտանի ,, ,, ,, 60 ռ.

Գործարանի առանձին աշխատողներից պահումները կատարվում է նույն կարգով։ ինչ կարգով բաշխվում են պարգևավարումներն։

7. «Էկստրա» և բարձր տեսակի խոշոր պանիրներ բեռնելու համար, յերբ այդ պանիրները գործարանից ստացվել են դեռ չհասունացած և հասունացումը տեղի յե ունեցել շրջանային պանրի պահեստում, վերջինի անձնակազմը ստանում է 2-րդ կետում խոշոր պանիրների համար նախատեսնված պարգևավարման 35 տոկոսը, իսկ 65 տոկոսը ստանում է գործարանի անձնակազմը։

8. Պանրագործարանը սպասարկող բազայի աշխատակիցներին—«էկստրա» և բարձր տեսակի պանրի վորակը, պանիրը գործարանից ստանալու սերտիֆիկատի վորակին հավասար և դրանից վոչ ցածր պահպանելու համար, սահմանել պարգևավարում հետևյալ չափով՝

Բեռնած «էկստրա» տեսակի պանրի ամեն մի ցենտներին 15 ռ.

,, բարձր ,, ,, ,, ,, ,, 2 ռ.

9. Բազայի ստանալիք պարգևավարման ամբողջ գումարը բաշխվում է պանրագործարանը սպասարկող բազայի առանձին աշխատակիցների միջև հետևյալ միավորներով՝—

Բազայի վարիչ — 2,0

Պահեստապետ — 3,0

Տեխնոլոգ (տեսակավարող) 2,6

Բանվոր — 1,0

10. Պարգևավարում ստանում են միայն մշտական և սեզո-

նույն բանվորները, վորոնք անմիջապես զբաղված են պանիրների հետ կապված աշխատանքներում։

Որավարձով աշխատող բանվորները պարգևվատրում չեն ստանում։

Իրենց պարտականությունների կատարման մեջ անփույթ վերաբերվող աշխատակիցները պարգևվատրման յենթակա չեն։

11. Սահմանել պահումներ բազայի անձնակազմից ամեն մեկ ցենտներ բեռնած պանրի համար, վորը պահելու և մինչև սպառողի հանձման կետը փոխադրելու ընթացքում կորցնում է իր վորակը, վերածվելով խոտանի կամ ավելի ցածր տեսակի («էկստրա» տեսակից բարձրի, բարձր տեսակից առաջինի, առաջին տեսակից յերկրորդի յերկրորդ տեսակից խոտանի) հետևյալ չափով՝—ավելի ցածր տեսակի դարձած ամեն մեկ ցենտներ պանրի համար — 30 ռ.

Ամեն մեկ ցենտներ խոտան պանիրի համար — 60 ռ.

Կրծողների կողմից վնասված ամեն մեկ ցենտներ պանրի համար — 20 ռ.

## ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԸՍՏ ՄԱՆՐ ՊԱՆՐԻ.

1. Մանր պանիր արտադրող ձեռնարկությունների թվին են դասվում,—

ա) Հոլլանդական—կլոր, Հոլլանդական-բրուսոկ, Բակշտեյն՝ Տիլզիտ, Ստեպնոյ, Գաուդի և Ջանախ պանիրներ արտադրող գործարանները։

բ) Հիշած տեսակի գործարաններից մանր պանիրներ ընդունող և բեռնող բազաները։

2. Պանրագործարանների անձնակազմին պանրի բարձր վորակի համար և այդ գործարանները սպասարկող բազաների անձնակազմին սահմանել պարգևվատրման հետևյալ կարգը։

## 3. ՊԱՆՐԱԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Գործարանի արտադրած և բազային հանձնած էկստրա և բարձր տեսակների մանր պանրի (30 տոկ. և ավել յուղայնու-

թյան) ամեն մեկ ցենտների համար գործարանի անձնակազմին պարգևատրել հետևյալ չափով՝

| | Հոլլանդական յուղ Բակշտեյնի համար | Զանախի համար |
| --- | --- | --- |
| Ամեն մեկ ցենտներ էկստրա տեսակին | 100 ռ. | 60 ռ. |
| ,, ,, ,, բարձր ,, | 40 ռ. | 24 ռ. |

4. Հիշած պարգևատրումը բաշխվում է գործարանի առանձին աշխատակիցների միջև հետևյալ միավորներով՝

Դիրեկտոր — 2
Աշխողեկ — 4
Վարպետ — 10
Վարպետի օգնական — 4
Բանվոր — 2
Լաբորանտ — 3
Գործարանը սպասարկող արտադրական շրջանային հրահանգիչ — 1
Նկուղու ավագ բանվոր — 3
Շրջգործվարչության դիրեկտոր — 0,5
Հնոցավար — 1
Կաթ ընդունող — 1
Մեքենավար — 3

5. Պարգևատրում ստանում են միայն մշտական և սեզոնային բանվորները, վորոնք մասնակցում են պանիր արտադրելու աշխատանքին։ Օրավարձով աշխատող բանվորները պարգևատրում չեն ստանում։

6. Աշխատակիցների մեղավորությամբ առաջացած խոտանի համար նրանց վարձատրություն չի տրվում։

Բացի դրանից սահմանել պահուճներ արտադրած ամեն մեկ ցենտներ յերկրորդ տեսակի և խոտան պանրի համար հետևյալ չափով՝

Յերկրորդ տեսակին — 20 ռ., խոտանին — 60 ռ. ամեն մեկ ցենտներին, իսկ չանախ պանրի համար յերկրորդ տեսակին 12 ռ. և խոտանին—36 ռ.։

H 23670

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Պահումները գործարանի առանձին աշխատակիցներից կատարվում է նույն կարգով, ինչ կարգով բաշխվում է պարգեվատրումները:

7. Սահմանել պարգեվատրում պանրագործարաններն սպասարկող բազայի աշխատակիցներին եկստրա և բարձր տեսակի պանրի վորակը, պանիրը գործարանից ստանալու սերտիֆիկատի վորակին հավասար և վոչ ցածր դրությամբ պահպանելու համար, լավ պահպանած և բեռնած եկստրա տեսակի պանրի մեկ ցենտներին 20 ռ. և բարձր տեսակի պանրի մեկ ցենտներին 3 ռ.:

Բազայի ստանալիք պարգեվատրումների ամբողջ գումարը բաշխվում է բազայի առանձին աշխատակիցների միջեվ հետեվյալ միավորներով—

| | |
|---|---|
| Բազայի վարիչ | 2 |
| Պահեստապետ | 3 |
| Տեխնոլոգ (տեսակավորող) | 2,5 |
| Բանվոր | 1 |

9. Պարգեվատրում ստանում են միայն մշտական և սեզոնային բանվորները, վորոնք անմիջականորեն զբաղվում են պանրի հետ կապված աշխատանքներում: Որավարձով աշխատող բանվորները պարգեվատրում չեն ստանում:

10. Սահմանել պահումներ ամեն մեկ ցենտներ բեռնած պանրի համար, վորը պահելու և մինչև սպառողի հանձնման կետը փոխադրելու ընթացքում կորցնում է իր վորակը, վերածվելով խոտանի կամ ավելի ցածր տեսակի (եկստրա տեսակից, բարձրի, բարձր տեսակից առաջին տեսակի, առաջին տեսակից յերկրորդ տեսակի, յերկրորդ տեսակից խոտանի, կամ կրծողների կողմից վնասված լինելու համար) հետեվյալ չափով—

Ավելի ցածր տեսակի վերածված պանրի ամեն մեկ ցենտների համար—15 ռ. խոտան պանրի ամեն մեկ ցենտների համար—50 ռ. և կրծողների կողմից վնասված պանրի մեկ ցենտների համար—15 ռ.:

Պահումները բազայի և առանձին աշխատակիցներից կատարվում է նույն կարգով, ինչ կարգով բաշխվում է պարգեվատրումները:

## 5. ՀԱՇՎԱՐԿԻ ԿԱՐԳԸ ՅԵՎ ՀԻՄՔԸ

1. ա) Գործարաններում.—Պանրի տեսակի հաշվարկի համար փաստաթուղթ են ծառայելու Պետ. Տեսչության սերտիֆիկատ-

ներն ինչպես պանիրները բաղայում ընդունելիս նույնպես և սպառման կետում, երբ պանիրը բեռնվում է անմիջապես գործարանից։

բ) Բազաներում.—Սպառման կետերին բարձր և առաջին տեսակների պանիրներ բեռնելուն՝ պանրի որակի համար բազաների անձնակազմին պարգևատրելու, ինչպես նաև բազաներում պանիրները վատ խնամելու և պահելու հետևանքով պանիրն ավելի ցածր տեսակի և խոտանի վերածվելու համար, պահումներ կատարելու հիմք են ծառայելու ԽՍՀՄ Սննդարդյունաբերության Ժողկոմատի Պետ. տեսչության կողմից սպառման կետերում, (ռեալիզացիայի ենթարկվող տրեստի) տված սերտիֆիկատներն։

2. Պանիրը ստացող տրեստը իր ժամանակին (72 ժամվա ընթացքում) պետ. տեսչության էկսպերտիզա կատարելու հայտ չներկայացնելու դեպքում, պարգևատրման համար հիմք է ծառայելու պետ. տեսչության տված սերտիֆիկատը պանիրը բեռնող բաղայում։

3. Գործարանների աշխատակիցներին պարգևատրումներ տալը պետք է կատարվի ամեն ամսի 10-ին անցած ամսի համար, համաձայն անցած ամսին պետ. տեսչությունից ստացած սերտիֆիկատների։

4. Այն դեպքերում, երբ հասունացած պանիրը մնում է գործարանում պահելու և ամսվա ընթացքում պանիր չի բեռնվում, շրջյուղարդի դիրեկտորին իրավունք է տրվում, արտադրական հրահանգչի եզրակացության համաձայն, գործարանում գտնվող պանրի որակին համապատասխան գործարանի անձնակազմին տալու նախավճար (ավանս) պարգևատրման գումարի հաշվին, որպիսին հետո և պահվում պանիրը բեռնելիս Պետ. տեսչության սերտիֆիկատների հիման վրա վերջնական հաշվարկ կատարելիս։

5. Այն դեպքում երբ շրջգործվարչությունը կամ տրեստը կհայտնաբերեն, որ գործարանը կամ բազան պարգևատրում տալը ճիշտ չեն կատարել, ապա վճարված գումարը պետք է հաշվի առնվի հետագա ամսի պարգևատրումների և պահումների հաշվարկի ժամանակ։

## 6. ԳԼԱՎՄԱՍԼՈՊՐՈՄԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ԿԱԹՆԱՇԱՔԱՐԻ ՀՈՒՄՈՒՅԹԻ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

Բարձր վորակի կաթնաշաքար-հումույթ արտադրելու նպատակով, Գլավմասլոպրոմի բոլոր գործարաններում կաթնաշաքարի արտադրությամբ զբաղվող անձնակազմին պարգեվատրելու համար կիրառել հետեվյալ կարգը՝

1. Արտադրած և բազային հանձնած առաջին տեսակի ստանդարտ կաթնաշաքարի հումույթի ամեն մեկ ցենտներին պարգեվատրում հաշվել քառասունհինգ (45) ռուբլի։

2. Պարգեվատրումները տրվում են աշխատակիցների հետեվյալ կատեգորիաներին՝—գործարանի դիրեկտորին, կաթնաշաքար արտադրող վարպետին, շաքարի բաժնի բանվորին, մեքենավարին, գործարանի հնոցավարին, հիմնական արտադրության վարպետին կամ աշխղեկի ակայության դեպքում, վերջինին։

4. Պարգեվատրումներն առանձին աշխատակիցների միջեվ բաշխվում են հետեվյալ միավորներով՝

| | | |
|---|---|---|
| Գործարանի դիրեկտորին | 2,5 | միավոր |
| Կաթնաշաքարի վարպետին | 10,0 | ,, |
| Կաթնաշաքարի բաժնի բանվորին | 7,5 | ,, |
| Գործարանի մեքենավարին | 1,5 | ,, |
| Հնոցավարին | 1,0 | ,, |
| Հիմնական արտադրության վարպետին կամ աշխղեկին | 2,5 | ,, |

4. Առաջին տեսակի ստանդարտ պրոդուկցիայի լակտոզի քանակը մինչ 30 տոկոսի և բարձր հասցնելու համար կաթնաշաքար արտադրող վարպետը ամեն մեկ ցենտներին ստանում է լրացուցիչ 10 ռուբլի։

5. Ստանդարտ չունեցող (յերրորդ տեսակի) կաթնաշաքար արտադրած դեպքում, պարգեվատրման գումարից ամեն մեկ ցենտներին պահումներ է կատարվում քսան (20) ռուբլի։

Պահումների գումարի բաշխումը կատարվում է համապատասխան 3-րդ կետի։

6. Արտադրական աշխատակիցների պարգեվատրումից բացի սահմանել պարգեվատրում կաթնամթերքներ պահող կետերի աշխատակիցներին՝ կաթնաշաքարը—հումույթը ճիշտ տեսակավո-

քելու, հակավորելու, դրոշմելու և պահելու համար 50-ի չափով մեկ ցենտներ առաջնակարգ տեսակի (ստանդարտ հակավորում և ճիշտ դրոշմում) պրոդուկցիային, որը կաթնամթերքներ պահելու կետերում պահելու պրոցեսում կպահպանի իր նախնական որակը (1-ի տեսակը)։

Հիշած պարգևավճարումը կաթնամթերքներ պահող կետերի աշխատակիցների մեջեվ բաշխվում է հետևյալ միավորներով՝—

| | |
|---|---|
| Եկսպերտ | 1,5 միավոր |
| Պահեստապետ | 1,5 ,, |
| Բանվոր | 1,0 ,, |
| Կետի վարիչ | 1,0 ,, |

7. Պրոդուկցիան ավելի ցածր տեսակի վերածվելու դեպքում կաթնամթերքներ պահող կետի անձնակազմից կատարվում է պահումներ պարգևավճարման գումարից 5 ռուբլի, ավելի ցածր տեսակի վերածված կաթնաշաքարի մեկ ցենտներին։

8. Գործարանների և կաթնամթերքներ պահող կետերի անձնակազմին պարգևավճարումներ տալը կատարվում է ամիսը մեկ անգամ, հետագա ամսի 10-ից ոչ ուշ։

Պարգևավճարումներ տալը նաև պահումներ կատարելը բոլոր դեպքերի համար հիմք են ծառայում տեղական պետ. տեսչության և շրջանային (մարզային) ստուգիչ լաբորատորիաների սերտիֆիկատները և քիմիական անալիզները։

## 7. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Ինքնարժեքի իջեցման պլանը կատարելու համար պայքար ստեղծելը խրախուսելու նպատակով գործարանների դիրեկտորներին, աշխ. ղեկավարներին, գործարանների վարպետներին, շրջյուղարդների կառավարիչներին և արտադրական հրահանգիչներին պարգևավճարում սահմանել ինքնարժեքի իջեցման պլանը կատարելուն համապատասխան։

1. Ինքնարժեքի իջեցման յեռամսյակային պլանը գերակատարելիս գործարանների դիրեկտորներին, գործարանների աշխղեկավարներին, գործարանների վարպետներին, շրջյուղարդ-

ների կառավարիչներին և արտադրական հրահանգիչներին վորակի համար հասանելիք պարգևատրումն ավելացվում է հետևյալ չափերով։

| Հաշվետու ինքնարժեքը պլանայինի հանդեպ | Պարգևատրման ավելացումը | Հաշվետու ինքնարժեքը պլանայինի հանդեպ | Պարգևատրման ավելացումը |
|---|---|---|---|
| 99 տոկ. | 10 տոկ. | 95 տոկ. | 30 տոկ. |
| 98 ,, | 15 ,, | 94 ,, | 40 ,, |
| 97 ,, | 20 ,, | 93 ,, | 50 ,, |
| 96 ,, | 25 ,, | | |

Ինքնարժեքի իջեցման պլանը չկատարելիս շրջյուղարդների կառավարիչները, արտ. հրահանգիչները, գործարանների աշխ. ղեկավարները և գործարանների դիրեկտորները պարգևատրում չեն ստանում։

2. Ինքնարժեքի պլանը չկատարելու դեպքում պրիմիտիվ գործարանների վարպետներին վորակի համար պարգևատրումը վճարվում է յեռամսյակի համար հասանելիք պարգևատրումների 50 տոկոսի չափով։ Նման պահում կատարվում է մեքենայացված գործարանների վարպետներից, վորտեղ աշխղեկի հատուկ պաշտոն գոյություն չունի։

3. Գործարանների և շրջյուղարդների անձնակազմին վորակի համար առաջին կետում նշված պարգևատրումը տրվում է յեռամսյակն անցնելուց հետո և վոչ թե ամեն ամսում, ինչպես նախատեսնվել է կաթնամթերքների վորակի պարգևատրման կանոնով։

Գործարանների վարպետներին վորակի համար հասանելիք պարգևատրումը վճարվում է ամեն ամիս 50 տոկոսի չափով։ Վարպետներին հասանելիք պարգևատրման մնացորդ գումարը սահմանվում և վճարվում է յեռամսյակն անցնելուց հետո, ձեռնարկության համար սահմանված ինքնարժեքի իջեցման յեռամսյակային պլանի կատարման համապատասխան։

1 և 2-րդ կետերում չթված բանվորների, ՃՏՍ-ի անդամների և ծառայողների կատեգորիաներին, այդ թվում և ցեխերի վարպետներին պարգևատրումը վճարվում է ամեն ամիս։

4. Գործարաններում արտադրվող բոլոր տեսակների կաթնամթերքների ինքնարժեքի պլանի կատարման գործում, գործարանների աշխատանքի գնահատումը կատարվում է հաշվապահական յեռամսյակային հաշվետվությունների հիման վրա։

## Ց. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅՈՒՂԻ ԿՈՐՈՒՍՏԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արտադրության մեջ յուղի կորուստի դեմ հաջող պայքարն ապահովելու նպատակով կիրառել վարձատրման հետեվյալ կարգը յուղի կորուստը կրճատելու համար։

1. Սերզատման համար սահմանել յուղի կորուստի նորմա սիջուկի մեջ՝—

մեքենայացված սերզատով—0,06 տոկ. յուղայնության ոբրատի մեջ
ձեռքի ,, 0,08 ,, ,, ,, ,,

2. Ցույց տրված նորմաների դիմաց, սերզատելիս յուղի կորուստը պակասեցնելու համար պարգեվատրել խնայած մեկ կիլոգրամ յուղին—2 ռուբլի։

Սիջուկ սերզատելիս խնայած յուղի համար հասանելիք գումարները բաշխվում են սիջուկի սերզատմամբ զբաղվող բանվորների մեջ, նրանց տարիֆային աշխատավարձի հարաբերականով։

3. Յուղ արտադրելիս, սահմանել յուղի կորուստի նորմա սերի և թանի մեջ՝—

| | Թթու սերից արտադրած կարագ յուղի | Քաղցր սերից արտադրած կարագ յուղի |
|---|---|---|
| Մեքենայացված գործարաններում . | 0,6 տոկ. | 0,7 տոկ. |
| Գրիմիտով « . | 0,7 « | 0,8 « |

յուղ արտադրելու համար սերի մեջ յեղած ընդհանուր քանակից։

4. Յերրորդ կետով սահմանված նորմաների դիմաց, յուղի կորուստը պակասեցնելու համար յուղի արտադրությամբ զբաղ-

վող գործարանի անձնակազմին վճարվում ե խնայած ամեն մեկ կիլոգրամ յուղին 2 ռուբլի։

5. Յուղ արտադրելիս, խնայած յուղի համար հասանելիք գումարները բաշխվում են յուղի արտադրությամբ զբաղվող (թրմիչի, խնոցու, սերի վաննայի վրա աշխատող) բանվորների միջեվ նրանց տարիֆային դրույքի հարաբերականով։

6. Թանի մեջ յեղած յուղի կորուստը ճշտիվ հայտնաբերելու համար (կապված տեխնիկական նոր սարքավորման հետ, սերի յուղայնության նկատմամբ), կիրառել այդ կորուստների հաշվետռումը, սերի մեջ յեղած յուղի ընդհանուր քանակի հանդեպ։

## 9. ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԳՈՐԾՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՅԻՆ ԱՊԱՐԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ.

1. Գործարանների, շրջգործվարչությունների և բաղանների ամսական հաշվապահական հաշվետվություններ ներկայացնելու համար սահմանել հետևյալ ժամկետները՝

1. Պրիմիտիվ գործարանների համար—հաշվետու ամսին հաջորդող ամսի 10-ին
2. Մեքենայացված « « « « 12-ին
3. Շրջյուղարդների համար (միացյալ հաշվետվություն) 18-ին
4. Տրեստին հաշվետու մեքենայացված գործարանների համար « « « 12-ին
5, Բաղանների համար « « « 18-ին

2. Հաշվարկային տեղեկագրեր (ցուցակ) կազմելու համար սահմանել հետևյալ ժամկետները՝

ա) Կաթ հանձնողների հետ—հաշվետու ամսին հաջորդող ամսի 5-ին

բ) Բանվոր-ծառայողների հետ « « « 4-ին

գ) Կաթկայանների հետ (կաթի հումույթի համար) « 4-ին

3. Սահմանել խրախուսական վարձատրություն գործարանների հաշվային աշխատակիցների համար։

ա) Հաշվարկային տեղեկագրերը ժամանակին ներկայացնելու համար ամսական աշխատավարձի 10 տոկոսը (ամեն ամսում)։

բ) Յեռամսյակային հաշվետվությունը ժամկետից շուտ, բարձր վորակով և լրիվ ներկայացնելու համար. ամսական աշխատավարձի 70 տոկոսը։

4. Սահմանել պարգևատրում շրջգործվարչությունների և բազաների ավագ հաշվապահներին-յեռամսյակային միացյալ հաշվետվությունները ժամկետից շուտ, բարձր վորակով և լրիվ ներկայացնելու համար-ամսական աշխատավարձի 100 տոկոսը։

5. Գործարանների հաշվային աշխատակիցներին լրացուցիչ պարգևատրում տրվում է շրջյուղարդի կառավարիչի կարգադրությամբ ըստ միջնորդության շրջյուղարդի ավագ հաշվապահի և հրահանգիչի։

6. Շրջյուղարդների և բազաների ավագ հաշվապահներին խրախուսական վարձատրություն տալը կատարվում է տրեստի դիրեկտորի թույլատվությամբ տրեստի գլխավոր հաշվապահի ներկայացմամբ։

10. Տվյալ տարիֆային համաձայնությունը պետք է բրոշյուրի ձևով տպագրվի տպարանում և բաժանվի բոլոր աշխատակիցներին։

Կաթնարդյունաբերության միության Կենտկոմ՝ ՊԻԼԻԳՈՒԴԱ.

Գլավմասլոպրոմ՝ ԳԻԲԵՐ

Ճ ի շ տ  է՝

# ԱՌԴԻՐ-ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

*1926—27 թ. անփոփոխ գները՝—յուղպանրագործարանների պրոդուկցիան արժեքային արտահայտության փոխանցելու համար*

| Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ | Չափի միավորը | 1926—27 թ. անփոփոխ գները | |
|---|---|---|---|
| | | Ռուբ. | Կոպ. |
| | ցենտներ | | |
| Յուղ | « | 200 | — |
| Պանիր | « | 165 | — |
| Կազեյին | « | 136 | — |
| Չոր օբրատ | « | 90 | — |
| Խտացրած օբրատ | « | 79 | 50 |
| Բրինձա | « | 120 | — |
| Ո ւ ր դ ա | « | 25 | — |
| Հում-թարմ կաթ | « | 25 | — |
| Պաստերիլիզացիայի յենթարկած կաթ | « | 34 | 40 |
| « « կաթ շշերով | — | 36 | — |
| Ս ե ր | ցենտներ | 116 | — |
| Պրոստակվաշա շշերով | — | 65 | — |
| Կեֆիր շշերով | — | 56 | — |
| Պանրային մասսա | ցենտներ | 120 | — |
| Սիրկաներ | » | 140 | — |
| Մածուն | « | 85 | — |
| Անյուղ լոռ | « | 28 | — |
| Ալբումին | « | 28 | — |
| Կաթի կվաս | « | 10 | — |
| Կիսել | « | 20 | — |
| Կաթնաշաքար | « | 176 | — |
| Պաղպաղակ սերից | « | 600 | — |
| » մրգից | « | 274 | — |

# ՀՐԱՀԱՆԳ

## Ի ԼՐՈՒՄՆ ԿԱՅԱՑԱԾ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ-ՀԱՅՅՈՒՂԱՐԴԻ ՑԱՆՑՈՒՄ

## Ա. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱԹ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԵՏԵՐԻ, ԿԱԹ ԸՆԴՈՒՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Կաթ ընդունող ամեն մեկ կետի նկատմամբ սահմանվում է կաթ ընդունելու տարվա կայուն պլան, ելնելով տվյալ կետին ամրացված պետական պարտավորությունները հանձնելու ենթակա կաթի քանակից։

2. Տարվա տարիֆային դրույքի ընդհանուր գումարը բաժանվում է ամսական կայուն աշխատավարձի (40 տոկ.) և մնացած 60 տոկոսը բաժանվում է հարկային կաթի պլանային քանակի վրա։

3. Կաթ ընդունողի փաստացի աշխատավարձը ամեն ամիս կարտահայտվի հետևյալում՝

ա) կայուն աշխատավարձ

բ) Գործավարձային արտադրանք

գ) Վարձատրություն արտապլանային և Դավալչեսկի կաթի համար

դ) Լրացուցիչ պրոգրեսիվ վարձատրություն կոլտնտեսություններից և մենատնտեսներից կոնվենցիոն գներով կաթ գնելու համար։ (համաձայն տարիֆային համաձայնության 2-րդ կետի)։

ՈՐԻՆԱԿ՝

1. Կաթ ընդունող № 3 կետի հարկային կաթի մթերման

տարվան պլանն ե 400 ցենտներ։

2. Կաթ ընդունողին սահմանվել ե տարիֆային դրույք մեկ ամսում 40 ռուբ.

3. Դրանից կաթ ընդունողը ստանում ե ամսական կայուն դրույք $40 \times 40\% = 16$ ռուբ.

4. Մի տարվա միանական գործավարձային գնահատումը վորոշվում ե՝ 40 ռ.—16=24 ռ.$\times$12 ամսի=288 ռ., 288 ռ. : 400 ցենտն.=72 կոպ. ցենտներին։

5. Մայիս ամսում կաթ ընդունողն ընդունել ե հետևյալ քանակի կաթ, վորի համար նրան պետք ե վճարվի՝

ա) կայուն աշխատավարձ 16 ռուբ.

բ) գործավարձային աշխատավարձ 80 ցենտն. 72 կոպ. = 57 ռ. 60 կոպ.

գ) Կոնվենցիոն գներով գնած կաթ ընդունելու համար, համաձայն գործավարձային գնահատման՝

14,5 ցենտն. 72 կոպեկով=10 ռ. 44 կոպ.

դ) Ընդունած դավալչեսկի կաթի համար 2,5 ցենտ. 72 կոպ. =1 ռ. 80 կոպ.

յե) Լրացուցիչ պրոգրեսիվ վարձատրություն կոնվենցիոն կաթի համար կաթնապրանքային ֆերմաներից՝ 14,5 ցենտն., վորը կազմում ե յեռամսյակի հարկային պլանային կաթի 14,5 : 180=08 տոկ. և վորը շկալայի հաշվով 14,5$\times$75 կոպ.=10 ռուբ. 87 կոպ.։

զ) Նույնը կոնվենցիոն կաթի համար, մենատնտեսներից՝ 2,8 ցենտներ, վորը շկալայով կազմում ե հարկային կաթի յեռամսյակային պլանի 15 տոկոսից պակաս՝—2,8$\times$1 ռուբ. 25. կոպ.= 3 ռուբ. 50 կոպ.։

---

Ընդամենը աշխատավարձ=100 ռ. 21 կոպ.

6. Կաթ ընդունողի վրա պարտականություն ե դրվում, ամեն որ յուրաքանչյուր կաթ հանձնողից վերցնել կաթի նմուշներ, հանձնվող կաթի քանակի ճիշտ հարաբերական չափով, նախորոք պատրաստած սրվակներում, վորոնց մեջ պետք ե լինի կաթը կոնսերվացիայի յենթարկող նյութ։

Կաթ ընդունողը, կաթի նմուշները վերցնելու կարգի մասին, հրահանգչական ցուցմունքներ ստանում ե գործարանի լաբորանտից։

## Բ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Արտադրական բանվորների թվին են դասվում աշխատանքի հետևյալ կատեգորիաները՝

ա) Բոլոր կատեգորիաների վարպետները՝
բ) Գործարանի վարպետների օգնականները.
գ) Ավագ բանվորները.
դ) Գործարանի բանվորները.
յե) Մեք. գործարանների մեքենավարները.
զ) Կոչեգար հնոցավարները.
է) Կաթնամաններ լվացողները.

2. Արտադրական բանվորների աշխատավարձի տարվան ընդհանուր ֆոնդը բաժանվում է 2 մասի, վորից 40 տոկոսը կազմում է կայուն դրույքների ֆոնդ և 60 տոկոսը գործավարձային ֆոնդ։

3. Կայուն դրույքների տարվան ֆոնդը բաշխվում է աշխատանքի առանձին կատեգորիաների միջև այն հաշվով, վորպեսզի ամսական անհատական կայուն դրույքը հավասար լինի նրա ամսական տարիֆային նորմալ դրույքին։

4. Աշխատավարձի տարվան ընդհանուր ֆոնդի 60 տոկոսը կազմող՝ գործավարձային տարվան ֆոնդը բաժանվում է կաթնամթերքների արտադրության տարվան պլանի վրա (արտահայտված պայմանական ցենտներներով) վորում կաթնամթերքի ամեն մեկ առանձին տեսակն ունի աշխատողունակության իր պայմանական կոեֆֆիցիենտը, վորը յերևում է հետևյալ օրինակից։

### ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԱՐՎԱ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆԸ

| Մթերքների տեսակը | Պլան ցենտներն. | Աշխատողունակության կոեֆֆիցիենտը | Ընդամենը պայմանական ցենտներ-միավորներ |
|---|---|---|---|
| Պանիր Շվեյցարական | 200 | 1,50 | 300,0 |
| « Հոլլանդական | 50 | 1,15 | 57,5 |
| « Բակշտեյն | 50 | 1,15 | 57,5 |
| « Չանախ | 60 | 1,00 | 60,0 |
| « Չեչիլ | 20 | 1,20 | 24,0 |

| | | | |
|---|---|---|---|
| Յուղ | 50 | 1,00 | 50,0 |
| Պաղպաղակ | 10 | 1,00 | 10,0 |
| Լ ո ռ | 20 | 0,30 | 6,0 |
| Ընդամենը | 460 | — | 565 ցենտ. միավ. |

5. Որինակի համար ընդունենք, վոր տվյալ գործարանի աշխատավարձի տարվա ընդհանուր ֆոնդը կազմում ե հետեվյալ գումարից՝

## ՏԱՐՎԱ ՖՈՆԴԻ ԲԱՇԽՈՒՄԸ

| Բանվորների կատեգորիան | Ամսական տարիֆային դրույքը | Աշխատանքի ամիսների թիվը | Աշխատավարձի տարվա ընդհ. ֆոնդ | Ամս. կայուն դրույքը | Տարվա գործավարձային ֆոնդը |
|---|---|---|---|---|---|
| Վարպետ | 250 | 12 | 3000 | 100 | 1200 |
| Ոգնական | 150 | 12 | 1800 | 60 | 1080 |
| Ավ. բանվ. | 90 | 12 | 1080 | 36 | 648 |
| Բանվոր 1 | 75 | 6 | 450 | 30 | 270 |
| » 2 | 75 | 3 | 225 | 30 | 135 |
| Մեքենավ. | 200 | 12 | 2400 | 80 | 1440 |
| Հնոցավար | 100 | 12 | 1200 | 40 | 720 |
| Կաթնաման լվաց. | 60 | 2 | 120 | 24 | 72 |
| Ընդամենը | — | — | 10.275 | — | 5165 |

Հետեվապես, գործավարձային գնահատումը ամբողջ բրիգադայի համար ամբողջ տարվա ընթացքում վորոշվում ե տարվա գործավարձային ֆոնդի գումարից՝ բաժանած պայմանական ցենտներ միավորների վրա ըստ պլանի՝

6150 : 565=10 ռ. 91 կոպ.

6. Այստեղից գործավարձային դրույքը կաթնամթերքի ամեն մեկ տեսակի համար համաձայն աշխկարողունակության կոեֆֆիցիենտի, վորոշվում ե մեկ ցենտ.—միավորին։

| | | |
|---|---|---|
| ա) | Պանիր Շվեյցարական | 10,91×1,5 =16 ռ. 37 կոպ. |
| բ) | « Հոլլանդական | 10,91×1,15=12 ռ. 55 կոպ. |
| գ) | « Բակշտեյն | 10,91×1,15=12 ռ. 55 կոպ. |
| դ) | « Չանախ | 10,91×1,0 =10 ռ. 91 կոպ։ |
| յե) | « Չեչիլ | 10,91×1,2 =13 ռ, 10 կոպ. |
| զ) | « Կարագ յուղ | 10,91×1,0 =10 ռ. 91 կոպ. |
| է) | « Պաղպաղակ | 10,91×1,0 =10 ռ. 91 կոպ. |
| ը) | « Լոռ | 10,91×0,3 = 3 ռ. 28 կոպ. |

7. Այդ գրույքը մնում է գործավարձային աշխատավարձի անփոփոխ չափանիշ, պլանավորված կաթնամթերքների ըստ ամեն մեկ տեսակի վերաբերյալ ամբողջ տարվա և ամեն ամսվա ընթացքում արտադրական բանվորների ամբողջ բրիգադայի համար։

8. Որինակի համար վերցնենք մայիս ամիսը, վորի ընթացքում արտադրված է հետևյալ քանակով կաթնամթերք և վորոշենք ամբողջ բրիգադայի համար գործավարձային աշխատավարձի հասանելիք գումարը՝

Մայիս ամսվա արտադրությունը

| | | |
|---|---|---|
| Պանիր Շվեյցարական | 40 ց. ×16) 37=654 ռ. 80 կոպ. |
| « Հոլլանդական | 15 ց. ×12) 55=188 ռ. 25 կոպ. |
| « Չանախ | 20 ց. ×10) 91=218 ռ. 20 կոպ. |
| Կարագ յուղ | 12 ց. ×10) 91=130 ռ. 92 կոպ. |
| Պաղպաղակ | 4 ց. ×10) 91= 43 ռ. 64 կոպ. |
| Լ ո ռ | 5 ց. × 3) 28= 16 ռ. 40 կոպ. |
| | Ընդամենը. . . . 1252 ռ. 21 կոպ. |

9. Հետեվապես, արտադրական բանվորների ամբողջ բրիգադայի աշխատավարձի գործավարձային մասի ընդհանուր գումարը վորոշվում է 1252 ռ. 21 կոպ.

Աշխատավարձի գործավարձային մասը բաշխվում է արտադրական բանվորների բրիգադայի մասնակիցների միջև ուղիղ հարաբերությամբ, փաստորեն ստացած կայուն գրույքի, և այդ վերջինը կախված է տվյալ ամսում փաստորեն աշխատած օրերի թվից։

Աշխատած օրերի հաշվառման համար գործարանում տարվում է տաբել, վորում ամեն օր համապատասխան աշխատողի դիմաց գրանցվում է փաստորեն աշխատած ժամերի թիվը։ Ամեն

մեկի աշխատած ժամերի ընդհանուր թիվը բաժանվում է 8-ի և այստեղից կստանանք տվյալ աշխատողի աշխատած մարդ օրերի թիվը։

10. Ըստ բերված օրինակի մայիս ամսում արտադրական բրիգադան աշխատել է հետևյալ կարգով՝

| Ազգանուն | | Պաշտոն | Ամսվա ընդհանուր աշխատած ժամ. թիվը | Աշխօրերի թիվը | Ամսական կայուն դրույքը | Հաշված է կայուն դրույքի (1 ժամվա) 1/200 մասով |
|---|---|---|---|---|---|---|
| Բաղալյան . | . | վարպետ | 200 | 25 | 100 | 100 ռ. |
| Զորյան . . | . | օգնական | 192 | 24 | 60 | 57-60 |
| Ստեփանյան | . | ավ. բանվոր | 180 | 22,5 | 36 | 32-40 |
| Մուրադյան։ | . | բանվոր | 200 | 25 | 30 | 30 — |
| Ավետիսյան. | . | « | 194 | 24,25 | 30 | 29-10 |
| Իվանով . | . | մեքենավար | 172 | 21,5 | 80 | 68-80 |
| Զոհրաբյան. | . | հնոցավար | 208 | 26 | 40 | 41-60 |
| Վարդումյան | . | կաթնամ. լվացող | 94 | 11,75 | 24 | 11-28 |
| | | Ընդամենը . . | 1440 | — | — | 370-78 |

Ծանոթություն.— Բանվորական օրը հաշվում է 8 ժամ, իսկ ամսվա աշխ. օրերի ընդհանուր թիվը 25, հետևապես աշխ. ամսում հաշվում է 200 ժամ և այստեղից մեկ ժամվա արժեքը հաշվում է ամսական կայուն դրույքի 1)200 մասի հաշվով։

11. Ամբողջ բրիգադայի մայիս ամսի գործավարձային աշխատավարձը կազմեց 1252 ռ. 21 կոպ. (տես 8-րդ կետ), իսկ կայուն դրույքը համաձայն փաստացի աշխ. օրերի կ՝կազմի 370 ռ. 78 կոպ.։ Այստեղից հետևում է, որ կայուն դրույքի ամեն մեկ ռուբլուն բանվորին, գործավարձային աշխատավարձի կարգով, ավելացվում է՝ 1252 ռ. 21 կ. : 370,78=3 ռ. 37 կոպ.

Ծանոթություն՝ Կոտորակ թվերից կազմվող կոպեկները չբաժանվող մնացորդը գրանցվում և փոխանցվում է հետևյալ ամսի հաշվին։

12. Հիմնվելով յուրաքանչյուր աշխատողի փաստորեն ստացած կայուն դրույքի վրա, կատարվում է հավելում վերը բերված հաշվով 3 ռուբ. 37 կոպ. մեկ ռուբլուն։ Այդպիսով աշխատավարձի գործավարձային մասը կ՚կազմի՝

| Ազգանուն | Պաշտոն | Ստացել է կայուն դրույքով | Հասնում է գործավարձով | Մայիս ամսվա աշխատավարձի ընդհանուր գումարը |
|---|---|---|---|---|
| Բաղալյան | վարպետ | 100 | 337 | 437- |
| Զորյան | ոգնական | 57-60 | 194-11 | 251-71 |
| Ստեփանյան | ավ. բանվոր | 32-40 | 109-18 | 141-58 |
| Մուրադյան | բանվոր | 30- | 101-10 | 131-10 |
| Ավետիսյան | « | 29-10 | 98-06 | 127-16 |
| Իվանով | Մեքենավար | 68-80 | 321-86 | 300-66 |
| Զոհրաբյան | հնոցավար | 41-60 | 140-19 | 181-79 |
| Վարդումյան | կաթ. ամ. լվացող | 11-28 | 38-01 | 49-29 |
| Ընդամենը . . . . . | | 370-78 | 1249-51 | 1620-29 |
| Հունիս ամսին փոխանցվող մնացորդ . . . . . | | — | 2-70 | 2-70 |
| Բոլորը . . | | 370-78 | 1252-21 | 1622-29 |

13. Վերը բերված որինակի հաշվարկից ստացվում է, վոր բրիգադայի աշխատողների թվի ամեն կրճատումը իջեցնում է կայուն դրույքների ընդհանուր գումարը և հետևաբար ուղիղ պրոգրեսիայով ավելացնում է բրիգադայի ամեն մեկ մասնակցողի աշխատավարձի գործավարձային մասը։ Այդ, ևս առավել հասկանալի յե, վորովհետև գործավարձային ընդհանուր գումարը մնում է անփոփոխ աշխատողների թվի բոլոր դեպքերում։

14. Ընդհակառակը, հաստիքի մեծացումը ստեղծում է կայուն դրույքների գումարի ավելացում և այստեղից, անկախ աշխատողների թվից, գործավարձային գումարը պակասեցնում է կայուն դրույքի ամեն մեկ ռուբլուն կատարվելիք հավելման չափը

և անպայման պակասեցնում է բրիգադայի մասնակիցների ամեն մեկի աշխատավարձի ընդհանուր գումարը։

15. Հաշվի առնելով վոր գործարանների արտադրական հիմնական ուղղությունը կրում է պանրագործության բնույթ, վորտեղ մնացող ցեխերը հանդիսանում յեն վորպես ոժանդակ և դրանցում աշխատանքը կատարում են պանրագործության մեջ աշխատողները, ուստի բրիգադային գործավարձը սահմանվում է բոլոր բանվորների համար խմբակային կարգով, բացի աշխատանքի հետևյալ կատեգորիաներից՝ վորոնք դասվում են անհատական անսահմանափակ գործավարձին՝

ա) ավագ աղ անողներ

բ) նկուղու վարպետի ոգնական

գ) աղ անողներ

դ) լաբորանտներ

յե ինժիներ-տեխնիկական աշխատակիցներ

զ) գործարանների դիրեկտորներ

16. Յեթե արտադրական բրիգադայում կրճատվում է բանվորների թիվը ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման, ապա տարվան, յեռամսյակային կամ նույնիսկ ամսական աշխատավարձի ֆոնդը իջեցման յենթակա չե, իսկ այդ ֆոնդի 40 տոկոսը հիմք է տալիս հարաբերական չափով բարձրացնելու ամեն մեկ բանվորի ամսական կայուն դրույքը։

Որինակ՝ յեթե նույն մայիս ամսում աշխատավարձի ֆոնդը, յելնելով արտադրության պլանից, ամբողջ բրիգադայի համար սահմանվել եր 2000 ռուբ. վորից 40 տոկոսը վորպես կայուն դրույքների կազմում է՝

2000×40 տոկ.=800 ռուբ.

Ապա տվյալ որինակում մենք բանվորներին, վորպես կայուն դրույքի պետք է տայինք վոչ թե 370 ռ. 78 կ., այլ 800 ռուբ., այսինքն 429 ռ. 22 կ. ավելի։

Տվյալ դեպքում կայուն դրույքների ֆոնդի մնացորդը ցույց տված գումարի չափով կարելի յե ավելացնել գործավարձային աշխատավարձի ընդհանուր ֆոնդին, վորը կ՝կազմի՝

1252 ռ. 21 կ.+429 ռ. 22 կ.=1681 ռ. 43 կ.

Այստեղից գործավարձայինը՝ կայուն դրույքի մեկ ռուբլուն 3 ռ. 37 կ. փոխարեն, կ՝կազմի՝

1681 ռուբ. 43 կ. : 370 ռ. 78 կ. = 4 ռ. 53 կոպ.

17. Այդ դեպքում աշխատավարձի գործավարձային մասը՝

կայուն դրույքի մեկ ռուբլուն 4 ռ. 53 կոպ. հավելումով կընդունի հետևյալ ձևը՝

| Ազգանուն | Պաշտոն | Ստացել է կայուն դրույքով | Հասնում է գործավարձով | Մայիս ամսվա աշխատավարձի ընդհանուր գումարը |
|---|---|---|---|---|
| Բոդալյան | վարպետ | 100 | 453 | 553 |
| Զորյան | օգնական | 57-60 | 260-92 | 318-52 |
| Ստեփանյան | ավ. բանվոր | 32-40 | 146-77 | 180-17 |
| Մուրադյան | բանվոր | 30 | 135-90 | 165-90 |
| Ավետիսյան | « | 29-10 | 131-82 | 160-92 |
| Իվանով | մեքենավար | 68-80 | 311-66 | 380-46 |
| Զոհրաբյան | հնոցավար | 41-60 | 188-45 | 230-05 |
| Վարդումյան | կաթ. ամ. լվացող | 11-28 | 51-09 | 62-37 |
| Ընդամենը . . . . . | | 370-78 | 1679-61 | 2050-39 |
| Հունիս ամսին փոխանցվող մնացորդը . . . | | — | 1-82 | 1-82 |
| Բոլորը . . | | — | 1681-43 | 2052-21 |

18. Ցեխե բրիգադան գտնում է հնարավոր աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատավարձի չափի բարձրացման նպատակով կրճատելու բանուժի թիվը ի հաշիվ բան որի խտացման, չ՝թույլատրելով դրա յերկարացումը 8 ժամից ավել և չ՝զրկելով իրեն նորմալ հանգստի օրերից, ապա նման կրճատումը անպայման կանդրադառնա ընդհանուր աշխատավարձի զգալի ավելացմամբ։ Օրինակի համար վերցնենք, որ մայիս ամսի արտադրությունը մնացել է անփոփոխ, իսկ բրիգադայի մասնակիցների թվից կրճատվել եյին հետևյալ անձինք՝

1. Բանվոր Ավետիսյանը

2. Հնոցավար Զոհրաբյանը

Այդպիսով բրիգադայի կազմը 8 հոգու փոխարեն մնացել եր 6 հոգի և վորովհետև տվյալ արտադրության դեպքում աշխատավարձի ընդհանուր գումարը մնում է անփոփոխ այսինքն 2052 ռ.

21 կ., որից 6 մարդու համար կայուն դրույքի գումարը կազմում է 370 ռ. 78 կ. փոխարեն, միայն 300 ռ. 08 կ., ուստի աշխատավարձի գործավարձային մասը կ՚կազմի՝

40 տոկ. աշխատավարձի ֆոնդի կայուն մասից՝ 2000×40 տոկ.=800 ռ., հանած 6 հոգուն փաստորեն տված կայուն դրույքը 300 ռ. 08 կ., մնում է ավելի աշխատավարձ՝ բանուժի կրճատումից . . . . . . . . . 499 ռ. 92 կոպ.
գործավարձի գումարը . . .1252 ռ. 21 կոպ.

Ընդամենը . . 1752 ռ. 13 կոպ.

Այդ գումարը բաժանած կայուն դրույքի գումարին կտա հավելում մեկ ռուբլուն՝

1752 ռ. 13 կոպ. : 300 ռ. 08 կոպ.=5 ռ. 83 կոպ.

Այդ դեպքում ամեն մեկ աշխատողի աշխատավարձը կընդունի հետևյալ ձևը՝

| Ազգանուն | Պաշտոն | Ստացել է կայուն դրույքով | Հասնում է գործավարձով | Մայիս ամսվա աշխատավարձի ընդհանուր գումարը |
|---|---|---|---|---|
| Բադալյան | վարպետ | 100 | 583 | 683 |
| Զորյան | ոգնական | 57-60 | 335-81 | 393-41 |
| Ստեփանյան | ավ. բանվոր | 32-40 | 188-89 | 221-29 |
| Մուրադյան | բանվոր | 30- | 174-90 | 204-90 |
| Իվանով | մեքենավար | 68-80 | 401-10 | 469-90 |
| Վարդումյան | կաթնամ. լվացող | 11-28 | 65-76 | 77-04 |
| Ընդամենը . . . . | | 300-08 | 1749-46 | 2049-54 |
| Հունիս ամսին փոխանցվող մնացորդ . . . | | — | 2-67 | 2-67 |
| Բոլորը . . | | — | 1752-13 | 2052-21 |

19. Բրիգադային-խմբակային գործավարձի ժամանակ անպայման պահանջվում է, որպեսզի բոլոր մասնակիցները կիրա-

ուեն աշխատանքի ճշտիվ ժամերին ներկայանալը և բոլորովին վերացնել աննպատակ խմաստով գործարանում գտնվելը (աշխատած ժամերի հաշվառումով), պարապուրդ ունենալը, անօրինական կարգով աշխատանքից բացակայելը և այլն։

Անգործ անցկացրած ամեն մեկ ժամը և նշված կարգի խախտումը կանդրադառնա բանվորների թվի ավելացմանը և այստեղից կ՚պակասի ոչ միայն տվյալ աշխատողի աշխատավարձը, այլ և բրիգադայի մյուս անդամների աշխատավարձը։

20. Ամեն մեկ բանվորի աշխատանքի գալու և գնալու գրաֆիկը պետք է խստիվ պահպանվի և այդ գրաֆիկը—տաբելը ամեն օր ճշտիվ պետք է լրացվի վարպետի կամ բրիգադայի կողմից ընտրված հատուկ անձի կողմից։

21. Աշխատանքի չներկայանալը թույլատրելի է միայն հարգելի պատճառներով և այն էլ միայն նախօրոք նախազգուշացնելով դիրեկտորին կամ վարպետին, հակառակ դեպքում աշխատանքից ինքնակամ բացակայելը կ՚համարվի պրոգուլ, այստեղից բղխող բոլոր հետևություններով։

## Գ. ՊԱՆՐԻ ՆԿՈՒՂՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Պանրի նկուղների բանվորների թվին են դասվում—խոշոր պանիրներ նաև յեվրոպական տիպի մանր պանիրներ (հոլլանդական և բակշտեյն) արտադրող գործարանների նկուղների վարպետների օգնականները, կամ ավագ աղ անողները և սովորական աղ անողները։

2. Հիմնվելով Ստախանովյան աշխատանքի մեթոդների կիրառման նվաճումների վրա և համեմատելով դրանք արտադրության հին նորմաների հետ, ընդունվում է հետևյալ նորմաները՝ նկուղում (ամեն վիճակում) գտնվող պանիրները մշակելու համար բանուժի միավորին մեկ օրում—

| Պանրի տեսակը | Մեկ հոգի աղանողի օրվան բանվածության հին նորման | Հին նորման ցենտներով | Ստախանովյան արտադրություն, ցենտներով | Տրեստի կողմից սահմանված նորման ցենտներով |
|---|---|---|---|---|
| Շվեյցարական | 75 գլ. | 60 | 150 | 90 ցենտ. |
| Սովետ-գրույեր | 225 բր. | 45 | | 70 « |
| Հոլլանդակ.-բրուս. | 400 « | 20 | | 30 « |
| « կլոր | 800 գլ. | 20 | | 30 « |
| Բակշտեյն | 800 « | 20 | | 30 « |

Հիմնվելով այն բանին վոր, պանրի զանազան տեսակները ստեղծում են աշխատանքի վոչ միատեսակ պայմաններ, ուստի բոլոր տեսակի պանիրները յելնելով նրանց հասունացման ժամկետից (խոշոր պանիրները 6 ամիս իսկ մանրները 3 ամիս), բերվում են աշխտարողունակության հետևյալ միավորներին՝

| | |
|---|---|
| Պանիր Շվեյցարական | 1,00 |
| Սովետական և գրույեր | 1,30 |
| Հոլլանդական և բակշտեյն | 3,00 |

3. Բոլոր բանվորների աշխատավարձի տարվա ընդհանուր ֆոնդը բաժանվում է յերկու մասի, ըստ վորի այդ ֆոնդի 40 տոկոսը կազմում է կայուն աշխատավարձ, իսկ 60 տոկոսը գործավարձային։

4. Կայուն դրույքը, ամսական տարիֆային դրույքի 40 տոկոսի չափով, տրվում է ամեն մեկ բանվորին ամեն ամիս, իսկ բոլոր բանվորների տարվա գործավարձային գնահատման գումարը բաժանվում է 12-ի, վորով ստացվում է նկուղում աշխատող բրիգադայի ամսական գործավարձային գնահատման գումարը։

5. Ամսական գործավարձային գնահատման գումարը բաժանած բանվորների թվի և պանիրների մշակման որվա նորմայի (արտադրված 90 ցենտն. Շվեյցարական պանիր մեկ որում) վրա, կ՚համարվի գործավարձային գնահատում ամբողջ տարվա ընթացքում։ Այդ գնահատումը բազմապատկելով այս կամ այն տեսակի պանրի մշակման աշխտարողունակության կոեֆֆիցենտին, կստանանք նրա գործավարձային գնահատումը։

6. Այդ հաշվելու որինակը կարելի յե տեսնել հետևյալից՝ ըստ նկուղու տարվա աշխատավարձի ֆոնդը շրջգործվարչության կողմից գործարանի համար նախատեսնվել է հետևյալ չափերով՝

ա) Նկուղու վարպետի ոգնականին ամսական 150 ռ. դրույքի դեպքում=1800 ռուբլի.

բ) 6 հոգի աղանողներն ամսական ամեն մեկին 90 ռ. դրույքի դեպքում=6 X 90 մեկ ամսում, իսկ տարվա համար կ՚կազմի . . . . . . . 6480 ռ.

Ընդամենը . 8280 ռուբլի.

Ամեն մեկ բանվոր ստանում է ամեն մի ամսում կայուն դրույք իր տարիֆային դրույքի 40 տոկոսի չափով, այսինքն՝

Վարպետի օգնականը 150 ռ.×40 տոկ.=60 ռ.

Աղանողը . . . . 90 ռ.×40 տոկ.=36 ռ.

Իսկ աշխատավարձի տարվան գործավարձային ֆոնդը կ՚կազմի 8280 ռ.×60=4968 ռուբլու

Այդ գումարը բաժանվում ե 12 ամսի վրա, որը կ՚կազմի 4968 ռուբ. : 12=414 ռուբլու

Այստեղից Շվեցարական պանրի պայմանական ցենտների գնահատումը ամբողջ բրիգադայի համար կ՚հավասարվի հետևյալին՝

ա) 414 ռ. : 7=59 ռ, 14 կոպ.

բ) 59 ռ. 14 կ. : 90=66 կոպ.

Հետևապես Շվեցարական պանրի մեկ ցենտների գործավարձային գնահատումը կազմում ե 66 կոպ., կամ սովետականը՝ 66 կոպ.×1,3=85,8 կոպ., հոլլանդական և բակշտեյնը՝ 66 կոպ. ×3,0=1 ռ. 98 կ., ամբողջ տարվա ընթացքում.

7. Տվյալ ամսում նկուղում գտնվող պանրի փաստացի քանակը բազմապատկելով գործավարձային գնահատմանը, կստացվի ամբողջ բրիգադայի գործավարձային աշխատավարձի ընդհանուր գումարը։ Այդ գումարը բաժանվում ե բրիգադայի մասնակիցների միջև նրանց կայուն դրույքի և ամեն մեկի աշխատած օրերի քանակի հարաբերությամբ, նույն կարգով ինչ և գործարանի արտադրական բրիգադայի նկատմամբ։

8. Վարձատրման յենթակա յե տվյալ ամսում նկուղում մշակման համար ամեն վիճակում գտնվող (աղանելու, գոլորշու և սառեցման նկուղում) պանրի ամբողջ քանակը։

9. Ընթացիկ ամսում արտադրությունից նկուղի հանձնվող պանրի քանակը հաշվվում ե կես չափով.

Օրինակ՝ Հունիս ամսում արտադրվել և հանձնվել ե նկուղին 52 ցենտներ, այդ հաշվում ե, որ հունիս ամսում յեղել ե 26 ցենտներ.

10. Խնամելու պրոցեսի ընթացքում վնասված պանրի խնամողների կամ աղ անողների անուշադիր վերաբերմունքից խոտան ստացվելու համար, աշխատավարձի դրույքը պակասեցվում ե 50 տոկոսով։

Նման դեպքերը դասվում են՝

ա) պանիրները կանաչ. սև կամ կարմիր բորբոսով վարակվելը.

բ) պանիրների կեղևի վնասվելը.

գ) պանրում առաջացած փոսիկները. աննորմալ աղանելու հետեվանքով.

դ) տրորված և ջարդված գլուխները.

յե) պանրի արտաքին այլ արատները, վորոնք առաջացել են խնամքի ժամանակ։

11. Նկուղում պանիրների խնամքի վորակի մասին յեզրակացություն տալիս է գործարանի վարպետը կամ աշխղեկը, իսկ վեճ առաջանալու դեպքում, հարցը լուծվում է տրեստի արտադրական հրահանգիչի կողմից։

12. Պանրի ակներեվ խոտանը, վորն առաջացել է նկուղաբանվորների կողմից իրենց աշխատանքին անուշադիր կամ անխնամ վերաբերվելու հետեվանքով, բոլորովին վարձատրման յենթակա չէ։

## Դ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԼԱԲՈՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Լաբորանտի տարվա տարիֆային դրույքը բաժանվում է յերկու մասի, ըստ վորի 40 տոկոսը վճարվում է լաբորանտին վորպես ամսական կայուն դրույք, իսկ 60 տոկոսը կազմում է գործավարձային վարձատրության ֆոնդը։

2. Գործավարձային վարձատրության մեկ տարվան ֆոնդը բաժանվում է կաթի և կաթնամթերքների նախագծվող անալիզների պլանային քանակի վրա ըստ աշխատարողունակության, վերածած համաստարաչափ կոյեֆֆիցենտի (Տես կցված աղյուսակը)

3. Դրա համար, գործարանի լաբորանտը աշխղեկի կամ վարպետի հետ միասին կազմում են տվյալ գործարանում նախագծվող և արտադրական տեխն, օրագրում, յուղի հաշվեկշռի հաշվետվությունում, կաթ հանձնողների հաշվարկային տեղեկագրերում ամեն որ գրանցվող, արտադրական հետեվանքները արտացոլելու համար, միանգամայն անհրաժեշտ բոլոր տեսակների անալիզների տարեկան պլանը։

Այդ պլանը քննարկվում է գործարանի արտադրական խորհրդակցությունում, վորից հետո հաստատվում է շրջգործվարչության կառավարիչների կողմից։

4. Նախագծվող, պարտադիր կարգով կատարվելիք բոլոր անալիզները բազմապատկելով աշխկարողունակության կոեֆֆիցիյենտին, ստացվում է անալիզների պայմանական միավորների թիվը։ Ապա անալիզների բոլոր պայմանական միավորների

թվերը գումարվում է և ստացած այդ ընդհանուր գումարի վրա բաժանվում է լաբորանտի տարվան աշխատավարձի գործավարձային մասը։ Ստացվող գումարը կազմում է մեկ պայմանական անալիզի գնահատումը։ Պայմանական անալիզի այդ գնահատումը բազմապատկած ամեն անալիզի աշխատարողունակության կոեֆֆիցենտով, կստացվի տվյալ անալիզի գնահատումը։

5. Աշխատավարձի գործավարձային մասը լաբորանտին տրվում է նրա կողմից մեկ ամսում փաստորեն կատարված անալիզների հաշվի հիման վրա։ Հաշվեառման ենթակա են միայն այն անալիզները, վորոնք համապատասխանորեն գրանցվել են գործարանի տեխնիկական մատյաններում և օրագրերում (լաբորանտի օրագիր, արտադրական-տեխն. օրագիր և այլն)։

6. Ըստ պլանի պարտադիր կարգով չնախատեսնված անալիզները լաբորանտը կատարում է գործարանի վարպետի, աշխղեկի կամ դիրեկտորի պահանջով, լրացուցիչ վճարով, տարվա սկզբից սահմանված գնահատումներով։ Այդ անալիզների հաշվեառումը կատարվում է առանձին տետրում գրանցելու միջոցով։

7. Այն անալիզները, վորոնք իրենց վոչ ճշտությամբ արատավորված են, վարձատրման ենթակա չեն։

## ՅԵ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՅԼ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1, Շրջգործվարչությունների կառավարիչների, արտադրական հրահանգիչների և մթերման տեսուչների, նաև հաշվային աշխատակիցների համար պրոգրեսսիվ անհատական գործավարձի կարգով-աշխատանքի վարձատրման նկատմամբ, տարիֆային համաձայնությունում տրված է բավական պարզ ցուցմունք, ուստի այդ հարցի վերաբերյալ վորեվե պարզաբանում չի պահանջվում։

2. Այս հրահանգում վորևէ փոփոխություն մտցնելու կամ տեղում գործի պրակտիկ դրվածքի հետեվանքով լրացումներ անելու անհրաժեշտության դեպքում, այդ փոփոխությունը և լրացումները կարող են թույլատրվել հատկապես տրեստի դիրեկտորի և կոթնտրդյունաբերության կենտկոմի լիազորի հաստատմամբ։

Գլավմասլոպրոմի Հայաստանի տրեստի դիրեկտոր ՈԹՅԱՆ

Կոթնարդյունաբերության միության Կենտկոմի լիազոր՝
ԹՈՐՈՍՅԱՆ

Ճ ի շ տ է՝

# ԱՂՅՈՒՍԱԿ

*Գործարանային լաբորանտների անալիզների, դրանց աշխատատարողունակության և արտադրության նորմաները*

| № № | ԱՆԱԼԻԶՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Աշխատատարողունակ. գործակիցը | Որ գործարանի համար անհրաժեշտ տվյալ անալիզը | Պլանի համար անհրաժեշտ նորմա |
|---|---|---|---|---|
| 1 | Կաթ հանձնողների կաթի յուղի տոկ. որոշելը . . | 1,0 | բոլոր գործարանների | Կաթերից և կոլխոզներ. ամեն օր, մյուս հանձնողներից 10 օրում 1 անգամ |
| 2 | Սերուցքի, խառնուրդի և շիճուկի յուղի % որոշելը | 1,5 | « | Պանրի 1 ցենտ. 6 անալիզ |
| 3 | Թանի « « « | 1,5 | « | Յուղի 1 « 4 « |
| 4 | Սերի « « « | 1,8 | « | 1 ամսում 100 անալիզ |
| 5 | Պանրի « « « | 2,5 | Կատարվում է հատուկ առաջադր. | |
| 6 | Յուղի մեջ յեղած ջրի տոկոսը որոշելը . . . | 3,0 | բոլոր գործարաններին | Յուղի 1 ցենտն. 2 անալ. |
| 7 | Պանրի մեջ յեղած աղի տոկոսը որոշելը . . | 6,0 | Շվեյցարակ. հոլանդական և բակշտեյն | |
| 8 | Յուղի մեջ յեղած աղի տոկոսը որոշելը . . . | 3,0 | Կատարվում է հատուկ առաջադր. | |
| 9 | Պանրի մեջ յեղած աղի տոկոսը որոշելը . . . | 9,0 | « | |
| 10 | Կաթի, սերի, սերուցքի, թանի և աղաջրի թթվութ. որոշելը . . . . . . | 0,5 | բոլոր գործարաններ. | Ամսում 150-ական անալիզ |
| 11 | Մակարդի թթվութ. որոշ. | 1,0 | « | « 30 « |
| 12 | Կաթի, սերի, սերուցքի տեսակարար կշիռը որոշելը | 0,3 | « | Պանրի 1 ցենտն. 2 անալ. |
| 13 | Կաթի թթվութ. վերջին աստիճանը որոշելը . . | 0,1 | « | Կաթի 1 « 3 « |
| 14 | Կաթի միխանիկան կեղտոտման ստուգումը . . | 0,5 | « | Ամեն մեկ կաթ հանձնողին ամիսը 2 անգամ |
| 15 | Խմորման, մակարդախմորման և ռեդուկտազային փորձը . . . . . . | 1,7 | Յեվրոպական պանիր. արտադր. գործ. | Ամսում 100 անալիզ |



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003209

[134.]
320
A II/23670